

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբեր

2021թ.

30.11.2021

Փաստահավաք աշխատանքներ Սյունիքի մարզի Սրաշեն, Ներքին Հանդ և Ծավ գյուղերում

Այսօր փաստահավաք աշխատանքներ ենք իրականացրել Սյունիքի մարզի Սրաշեն, Ներքին Հանդ և Ծավ գյուղերում, տեղի են ունեցել քննարկումներ բնակիչների հետ. մարդու իրավունքների և հումանիտար լուրջ խնդիրներ:

Վեր են հանվել Կապան-Ճակատեն ճանապարհին առանց իրավական հիմքերի, այսպես կոչված, ադրբեջանական սահմանային ու մաքսային վերահսկողության սահմանելու և ադրբեջանական զինված ծառայողների կողմից ճանապարհը փակելու հետևանքով մարդկանց համար առաջ եկած խնդիրները, իրավունքների խախտումները:

Մասնավորապես, Ծավ գյուղում գործող հացի արտադրամասը, որն արտադրանքն իրացնում էր ինչպես հարակից գյուղերում, այնպես էլ Կապան քաղաքում, ստիպված է եղել 50%-ով կրճատել արտադրանքի ծավալները, դրա հետևանքով խնդիրներ են առաջացել նաև աշխատողների աշխատավարձերի հետ կապված: Մեկ այլ դեպքում խնդիրներ են առաջացել ձկնաբուծության հետ կապված:

Այսինքն՝ խախտված են թե՛ տնտեսական գործարարությամբ զբաղվելու, թե՛ աշխատանքային իրավունքները, մարդիկ կրում են լուրջ տնտեսական վնասներ ադրբեջանական անօրինական արարքներով:

Առկա են նաև հրատապ բուժօգնության իրավունքի խաթարման դեպքեր. խնդիրն էլ ավելի է սրվում այն պատճառով, որ բնակավայրերում ապրում են նաև տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ում առողջության պահպանումը, հատկապես պահանջում է հրատապ արձագանք, դեղորայքի արագ մատակարարում և անհրաժեշտության դեպքում՝ արագ հոսպիտալացում: Թեև Շիկահողում գործում է բժշկական ամբուլատորիա, ուր կա բուժքույր և յուրաքանչյուր գյուղ էլ ունի բուժակ կամ բուժքույր, բայց բուժօգնության լուրջ հարցերը չեն կարող լուծվել. հոսպիտալացման համար մարդիկ պետք է 3-3,5 ժամ ճանապարհ անցնեն, որպեսզի Մեղրիով հասնեն Կապան:

Օրինակ՝ գյուղերից մեկում բնակիչը պետք է պարբերաբար սրտի հետազոտություն անցնի Երևանում և Կապանում՝ արյան մակարդեղիության ցուցանիշների հետազոտություն, մեկ այլ դեպքում՝ աչքի հետազոտություն, բայց ճանապարհի պատճառով չեն կարողանում գնալ այլևս հետազոտությունների: Ներքին Հանդում միայնակ կենսաթոշակառու բնակիչը չի կարողանում ներկայանալ Միասնական սոցիալական ծառայություն՝ հաշմանդամություն սահմանելու գործընթաց սկսելու համար:

Կրթական իրավունքի խնդիրներ են առաջ եկել Սրաշենից Ներքին Հանդի դպրոց հաճախող երեխաների համար, իսկ Ներքին Հանդի երեխաների իրավունքներն առանց այն էլ կոպիտ ոտնահարված են, քանի որ ադրբեջանական զինված ուժերը տեղակայված են դպրոցից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա: Խաթարված են երեխաների լավագույն շահերը:

Ոչ ամենագնաց (թեթև մարդատար) մեքենաների համար այլընտրանքային ճանապարհի բացարձակ անանցանելիությունը դարձել է ընտանիքների բաժանման պատճառ. օրինակ՝ Շիկահողում, Ճակատենում երիտասարդ ընտանիքներ Կապան աշխատանքի հասնելու դժվարությունների պատճառով ստիպված բնակարան են

վարձակալել Կապանում՝ գյուղում թողնելով իրենց ծնողներին կամ ընտանիքի այլ տարեց անդամներին: Սրաշենում և Ներքին Հանդում մարդիկ զրկվել են իրենց երեխաներին ու թոռնիկներին տեսնելու, ընտանիքի հետ միասին լինելու հնարավորությունից:

Բնակիչները նաև տեղեկացրել են, որ Կապան-Ճակատեն ճանապարհին աղբբեջանական զինված ծառայողների հայտնվելու պահից սկսած առաջ են եկել ինտերնետ կապի որակի և հեռախոսակապի խնդիրներ. այս հարցում այցի ընթացքում հնարավորություն է ունեցել հավաստիանալ նաև Պաշտպանի աշխատակազմը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի համար ակնհայտ է, որ իրականում, ճանապարհների ապաշրջափակման քողի ներքո աղբբեջանական իշխանությունները վարում են ՀՀ քաղաքացիական բնակավայրերի մեկուսացման ու հումանիտար խնդիրներ առաջացնող նպատակային քաղաքականություն. Սյունիքում Գորիս-Կապան ճանապարհին 2021թ. նոյեմբերի 11-ից և Կապան-Ճակատեն ճանապարհին նոյեմբերի 15-ից հայտարարված աղբբեջանական, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողությունը որևէ կապ չունի դրա նպատակների հետ:

Տեղական մարմինները, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ և ԱԱԾ Սահմանապահ զորքերի ծառայողները տեղերում միջոցներ են գործադրում մարդկանց օգնելու համար: Այս մասին նշել են նաև բնակիչները: Սահմանվել է նաև այլընտրանքային դժվարանցնելի ճանապարհով Ճակատենից Կապան տանող 1 «ՈՒԱԶ» մեքենայով երթուղի օրական 3 անգամ,

ինչպես նաև օրական 1 անգամ Մեղրի տանող երթուղի:

Բայց հարցն բոլորովին այլ է: Որքան էլ, օրինակ, տեղական մարմիններն աջակցեն, դա օբյեկտիվորեն չի լուծում իրավունքների այն զանգվածային խախտումների հարցը, որ առաջ է եկել աղբբեջանական իշխանությունների, նրանց զինված ծառայողների անօրինական արարքներով (օրինակ՝ անվտանգություն, մարդկանց բնականոն կյանքի վերականգնում և այլն):

Ուստի, ելքը հստակ է՝ աղբբեջանական զինված կամ այլ ծառայողներ մեր համայնքների հարևանությամբ կամ համայնքների միջև ճանապարհներին չպետք է լինեն, պետք է ստեղծվի անվտանգության ապառազմականացված գոտի: Դա է ՀՀ բնակիչների իրավունքները վերականգնելու ճանապարհը:

Ոչ ոք իրավունք չունի անտեսել մարդու իրավունքների և հումանիտար խնդիրները սահմանների որոշման հետ կապված գործընթացում:

Այս մասին հատուկ զեկույցները Մարդու իրավունքների պաշտպանը կներկայացնի միջազգային համապատասխան կառույցներին, ինչպես նաև ՀՀ մարմիններին և ՀԿ-ներին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/213296590989281>

30.11.2021

ՄԻՊ. Աղբբեջանցիների դիտակետը Ճակատենի բնակչի տան վերևում է՝ կտրել են այդ և մի քանի ընտանիքի ջուրը

PanARMENIAN.Net - Աղբբեջանական զինծառայողների **դիտակետը** գտնվում է Սյունիքի մարզի **Ճակատեն** գյուղի բնակիչ Գևորգ Ավագյանի տան վերևում՝ սարի վրա: Նա զրկվել է ընտանիքի եկամուտից և շարունակում է մեծ վնասներ կրել աղբբեջանական հանցավոր արարքների պատճառով, ասվում է ՄԻՊ Արման Թաթոյանի **ֆեյսբուքյան էջում**:

«Ճակատեն մեր այցի ընթացքում տեղեկացանք, որ 5-6 տարի առաջ 3 ընտանիքով իրենց տներում ջրամատակարարում ունենալու համար մեծ չարչարանքով 2 կմ երկարությամբ խողովակաշար են անցկացրել գյուղի մոտակա բարձունքում գտնվող ջրի ակունքից՝ ծախսելով ավելի քան 2 միլիոն դրամ, սակայն աղբբեջանական զինված ծառայողների իրավական որևէ հիմք չունեցող տեղակայումներից հետո վերջիններս **կտրել են այս ընտանիքների ջուրը**: Հիմա մարդիկ ստիպված են ջրի պաշարը հոգալ գյուղի այլ աղբյուրների ջրով, բայց դա մեծ խնդիր է, քանի որ ջրի պաշարներն չեն բավականացնում բնակիչներին:

Դրանից բացի, Գևորգ Ավագյանն իր մեքենայով տաքսի ծառայություն է մատուցում Կապանում: Այս աշխատանքը նրա ընտանիքի եկամտի աղբյուրն է:

Կապան-Ճակատեն ճանապարհին աղբբեջանական բացարձակ անհիմն, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողության պատճառով **չի կարողանում մեկնել իր ամենօրյա աշխատանքին**: Շրջանցող նոր ճանապարհով հնարավոր չէ նույն աշխատանքը կատարել: Մարդը պարզապես զրկվել է իր և ընտանիքի ապրուստը հոգալու հնարավորությունից», -ասվում է գրառման մեջ:

ՄԻՊ-ը նշել է, որ այս նույն ընտանիքը **զրկվել է նաև իր արտավայրերն օգտագործելու** հնարավորությունից, քանի որ աղբբեջանցիները ներկա են այդ տարածքներում:

Նշվում է նաև, որ փաստերն ակնհայտ են՝ աղբբեջանական զինված կամ այլ ծառայողների տեղակայումները, հետագա ամրացումները Հայաստանի գյուղերի անմիջական հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհներին բացարձակ **գուրկ են իրավական հիմնավորումից**:

«Նրանց արարքները հանցավոր բնույթի են, քանի որ միայն խորացնում են մարդկանց իրավունքների խախտումները, խաթարում են նրանց բնականոն կյանքը և կատարվում են դիտավորությամբ: Այդ կերպ Հայաստանի բնակչությանը (հատկապես սահմանային բնակավայրերում) էլ ավելի մեծ հումանիտար խնդիրների առաջ են կանգնեցնում», -ասվում է հայտարարության մեջ:

Աղբյուրը՝ <https://www.panarmenian.net/arm/news/297060/?fbclid=IwAR2xEqq-Lin6gnND5IIcTHe-zQX2E3AvO2V4GvrzqoEN00wFMobs0Czp-80>

27.11.2021

Գորիս-Կապան ճանապարհին կառուցվում է աղբբեջանական SOCAR բենզալցակայան

Սյունիքի մարզում Գորիս-Կապան ավտոճանապարհը զավթած աղբբեջանցիները ոչ միայն մաքսակետ են տեղադրել, այլև Աղբբեջանի պետական նավթային ընկերության՝ SOCAR-ի բենզալցակայան բացել:

Դեռևս ամիսներ առաջ **Գորիսի քաղաքապետի տեղակալ Կարեն Քոչարյանը** LNB.CC.com -ին հասնել էր, որ Գորիս-Կապան ճանապարհի հատվածում աղբբեջանական կողմը **բենզալցակայան է կառուցում**:

Նշենք, որ SOCAR-ը Աղբբեջանին պատկանող նավթի և բնական գազի ընկերություն է:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/goris-kapan-chanaparhin-karutsvum-e-adrbejanakan-socar-benzaltsakayan>

26.11.2021

«Մենք 3 անգամ առաջ ենք տվել մեր դիրքերը, հետո ենք հետ քաշվել». Սյունիքի մարզպետ

Ոչ մեկը չի ուզեցել հետ քաշվի. այդ օրերին վարչապետը եկել է Գորիս ու խորհրդակցություն արել: Այս մասին, այսօր՝ նոյեմբերի 26-ին, լրագրողների հետ զրույցում նշեց ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը՝ անդրադառնալով հարցին, թե ինչպե՞ս է վերաբերվում այն հանգամանքին, որ նախորդ տարվա դեկտեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանով Սյունիքում զորքերը հետ քաշվեցին:

Հիշեցնենք, Փաշինյանը նշել էր, որ եթե նման որոշում չկայացվեր՝ Սյունիքում ռազմական գործողություններ էին սկսվելու և մենք խնդիրներ էինք ունենալու:

«Փաշինյանն ասել է՝ անցեք Սյունիքի պաշտպանության: Մենք էլ Նոնաձորից Խոզնավար նպաստավոր բարձունքների վրա անցել ենք պաշտպանության: Ավելին, մենք 1 ամիս համագործակցել ենք, որ «նեյտրալ զոնան» մենք պահենք: 3 անգամ Կուրաթլուի հատվածում մենք մեր դիրքերն առաջ ենք տվել, հետո Ռուսաստանը չի համաձայնել, մենք պետք է զբաղեցնեինք Խորհրդային Միության սահմանները: չեն համաձայնել, մեզ հետ են տվել», – ասաց Պողոսյանը:

Նա հավելեց, որ հանձնաժողով է եղել, Ռուսաստանի եւ Ադրբեջանի հետ համագործակցել են, որ սահմանները մնան նույն տեղում, նրանք չեն համաձայնել, դրա համար հայկական ուժերը զբաղեցրել են Խորհրդային Միության սահմանները:

Հիշեցնենք, որ Փաշինյանը հայտնել էր՝ այդ տարածքները հանձնվել են 7 շրջանների մաս լինելու տրամաբանության մեջ, ինչն արձանագրված է ՀՀ տարածքի վարչատարածքային բաժանման մասին օրենքում: Նա հավելել էր, որ զորքերը հետ քաշելու հրաման է տվել մարտավարական ճանապարհ չկորցնելու համար:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/674471.html>

19.11.2021

Հայտարարվում է մրցույթ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսի թափուր տեղի համար

Հայտարարվում է մրցույթ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսի թափուր տեղի համար՝

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս	326	Համապատասխան մասնագիտական աշխատանքի փորձ և միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն
--	-----	---

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Յուրաքանչյուր մասնակցին պատրաստվելու համար տրվելու է մինչև 15 րոպե ժամանակ իսկ պատասխանը արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատություն է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝

Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտար երկրացիների,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- 2) դատական կարգոց զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընֆգրկված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. **դեկտեմբերի 16-ին ժամը 14.00-ին** «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզի, ք. Գորիս, Հայկազունիների փող. 4 հասցե:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-59-54-18 077-78-22-79, հեռախոսահամարներով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/haytararvum-e-mrtsuyt-gorisi-petakan-qolej-poak-i-dasakhosi-tapur-tekhi-hamar-1>

17.11.2021

Կապան-Տաթև ճանապարհի 39 կմ-ին՝ Աղվանի գյուղից վերև, տեղադրվել է տաքացման կետ

Հաշվի առնելով եղանակային պայմանները, դրանց հետևանքով հնարավոր պատահարներն ու արտակարգ դեպքերը՝ Սյունիքի մարզային փրկարարական վարչության կողմից Կապան-Տաթև ճանապարհի 39 կմ-ին՝ Աղվանի գյուղից վերև, տեղադրվել է տաքացման կետ: Ճանապարհին մնացած, տուժած քաղաքացիներին առաջին օգնություն կցուցաբերվի կահավորված և հարմարեցված այս կետում: Տնակը տրամադրվել է Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից: Շարունակում է գործել Շուռնուխում բացազատված կետը, իսկ առաջիկայում տաքացման կետեր կտեղադրվեն նաև Վերին Խոտանանում և Երևան-Գորիս ճանապարհի Տաթև տանող խաչմերուկում:

Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ տաքացման նոր կետերի տեղորոշմանը և կահավորմանն առնչվող խնդիրների լուծման նպատակով տեղում աշխատել են ՀՀ ԱԻ նախարար Անդրանիկ Փիլոյանը, Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, ԱԻՆ ՓԾ տնօրեն Արմեն Գասպարյանը և Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Արթուր Հարությունյանը:

Տեղեկացնենք նաև, որ անբարենպաստ եղանակի հետևանքով դժվարանցանելի ճանապարհներին հայտնված, կամ այլ պատճառներով օգնության կարիք ունեցող քաղաքացիները կարող են զանգել 911 հեռախոսահամարին:

Աղբյուրը՝ <https://armeniasputnik.am/20211117/sjuniqi-marzum-teghadrvel-en-taqacman-keter-ainn-arajin-ognutjun-kcucaberi--35451255.html>

16.11.2021

Ադրբեջանի ԶՈՒ հարձակումները լրջորեն վտանգվել են Սիսիան համայնքի մի շարք բնակավայրերի բնակչության կյանքը և առողջությունը. ՀՀ ՄԻՊ

Ադրբեջանական զինված ուժերի նոյեմբերի 14-ից հանցավոր արարքներով ու ներխուժումներով, իսկ նոյեմբերի 16-ից նաև ահաբեկչական բնույթի զինված հարձակումներով լրջորեն վտանգվել է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի մի շարք բնակավայրերի քաղաքացիական բնակչության կյանքը և առողջությունը:

Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տվյալների՝ Սիսիան համայնքի Իշխանասար, Նորավան և Աղիտու գյուղերում, ինչպես նաև Սիսիան քաղաքի մի մասի բնակիչների համար լսելի են եղել ադրբեջանական հրետակոծության և արկերի պայթյունի ձայներ:

Նորավանում նաև լսելի են տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակոցների ձայներ. այստեղ կրակոցների ձայներն այսօր լսելի են եղել ժամը մոտ 13-ից սկսած և դեռ ժամը 16:30-ի դրությամբ եղել են լսելի:

Սյունիքի մարզ 2021թ. մայիսին ադրբեջանական հանցավոր ներխուժումների արդյունքում նշված բնակավայրերի բնակիչները զրկվել են իրենց պատկանող հողատարածքներն օգտագործելու հնարավորությունից, քանի որ ադրբեջանական զինված ուժերը առանց որևէ իրավական հիմքի ֆիզիկապես գտնվում են հենց այդ հողատարածքներում:

Օրինակ՝ Նորավանի դեպքում մարդիկ գրկվել են 200-400 հա արոտավայրերից ու խոտհարքներից: Աղիտուի դեպքում մարդիկ գրկվել են շուրջ 800 հա հողատարածքից, որից մոտ 200 հա խոտհարք և մոտ 600 հա արոտավայր:

ՀՀ զինծառայողներն անմիջականորեն պաշտպանում են քաղաքացիական բնակչության կյանքն ու առողջությունը, իսկ աղբբեջանական զինված ուժերի գործողությունները պետք է գնահատել այդ երկրի իշխանությունների ցեղասպան քաղաքականության համատեքստում:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1068334.html>

16.11.2021

Սյունիքում կրակը դադարել է Օվչառովի միջնորդությամբ

Քիչ առաջ տեղեկություն ստացանք, որ Սյունիքում կրակը դադարեցվել է Հայաստանում տեղակայված 102-րդ ռազմաբազայի հրամանատար Դմիտրի Օվչառովի միջնորդությամբ:

Ըստ երևույթին՝ թշնամական զորքի առախաղացումը կանխվել է, սակայն արդեն իսկ գրավված տարածքը հետ չի վերադարձվել, այսինքն՝ աղբբեջանցիները առաջ եկած դիրքերից չեն նահանջել: Մեր տեղեկություններով՝ զոհերի դիակները մնացել են թշնամու զորքի թիկունքում, այդ պատճառով ՊՆ-ն չի կարողանում զոհերի հստակ թվեր հրապարակել: Առողջապահության նախարարության մեր աղբյուրների փոխանցմամբ վիրավորներից և ոչ մեկը դեռս հայաստանյան հիվանդանոցներ չեն հասցվել:

Աղբյուրը՝ <https://hayeli.am/?p=656256&l=am>

15.11.2021

ԱԽ-ի այսօրվա հայտարարությունը խախտում է Սահմանադրության և մարդու իրավունքների միջազգային պահանջները. ՄԻՊ

ՀՀ անվտանգության խորհրդի (ԱԽ) այսօրվա հայտարարությունը՝ կապված Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ավտոճանապարհների հետ, խախտում է ՀՀ Սահմանադրությունը և մարդու իրավունքների միջազգային պահանջները:

1) Մասնավորապես, ԱԽ-ի նոյեմբերի 15-ի հայտարարությունը հղում է անում ԽՍՀՄ չկոնկրետացված ինչ-որ քարտեզների ու նշում, որ Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ավտոճանապարհների աղբբեջանական վերահսկողության ներքո գտնվող հատվածները ՀՀ տարածքում չեն գտնվում:

Այնուհետև, ԱԽ հայտարարությունը խոսում է այլընտրանքային ճանապարհների ցանցի ստեղծման մասին ու դրանով իսկ, ըստ էության, թույլատրելի է համարում աղբբեջանական վերահսկողությունը նշված ճանապարհների նկատմամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի վստահ համոզմամբ՝ ԱԽ-ի այս հայտարարությամբ ամբողջությամբ անտեսված են մարդու իրավունքների պահանջները, անտեսված է այն, որ աղբբեջանական վերահսկողությունը նշված ճանապարհների նկատմամբ ոտնահարում է Հայաստանի բնակչության՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված և միջազգայնորեն ճանաչված կենսական իրավունքները:

2) Նախ, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝

«1.Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Սահմանադրության 2-րդ գլուխը երաշխավորում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները:

ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ Մարդու իրավունքների պաշտպանը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Սահմանադրության 52-րդ հոդվածն ամրագրում է նշված մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու յուրաքանչյուր անձի բացարձակ սահմանադրական իրավունքը:

ԱԽ-ի հայտարարությունը միջազգային պահանջների թվում անտեսել է ԵԱՀԿ 2017թ. դեկտեմբերի 19-ի պաշտոնական ուղեցույցը Պետական սահմանների դելիմիտացիայի և դեմարկացիայի վերաբերյալ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի 2021թ. ուղեցույցը միջազգային սահմաններին մարդու իրավունքների վերաբերյալ և այլն: Այս ակտերն ամրագրում են մարդու իրավունքները՝ որպես սահմանային ցանկացած գործընթացի պարտադիր բաղադրատարր:

3) Խնդիրն այն է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո մինչ օրս, այդ թվում՝ կապված 2021թ. նոյեմբերի 10-ին և 14-ին հայտարարված համապատասխանաբար Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին, այսպես կոչված, ադրբեջանական սահմանային ու մաքսային հսկողության անցակետեր սահմանելու հետ, տեղում այցերով և մշտադիտարկմամբ, Պաշտպանին հասցեագրված անհատական ու կոլեկտիվ կոնկրետ բողոքների քննությամբ ձեռք է բերել հավաստի փաստեր այն մասին, որ այդ ճանապարհներին ադրբեջանական զինված ծառայողների հայտնվելու պահից խախտված են Հայաստանի քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգության, ազատ տեղաշարժի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, տնտեսական գործունեության ազատության իրավունքները, երեխայի շահերը և այլն: Չկան այս իրավունքների պաշտպանության, խախտում կատարողներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ և այլն:

Մասնավորապես, Գորիս-Կապան ճանապարհին արձանագրվել են ՀՀ բնակչության իրավունքները խախտող ադրբեջանական արարքների այնպիսի փաստեր, ինչպիսիք են՝ ճանապարհը Որոտանի և Դավիթ Բեկի հատվածներում օգոստոսի 25-27-ը դիտավորությամբ կամայական փակելը, դրանով ՀՀ Նոր Առաջաձոր, Բարձրավան, Որոտան, Շուռնուխ բնակավայրեր մեկուսացման և հումանիտար ճգնաժամի առաջ դիտավորյալ կանգնեցնելը, քաղաքացիական մեքենաների ուղղությամբ քարեր նետելը, մայթեզրին՝ ադրբեջանական

դիրքերի հարևանությամբ կանգնելու փորձ կատարող քաղաքացիական մեքենաներին զենքով սպառնալը, ահաբեկելու նպատակով ավտոբուսով երեխաների կանգնեցնելը, ՀՀ-ում օրինական հիմունքներով գտնվող Իրանի քաղաքացիներից անօրինական վճարներ գանձելը, նրանցից մեքենայի վառելիք տրամադրելու և այլ անօրինական պահանջներ ներկայացնելը և այլն:

Կապան-Ճակատեն ճանապարհին ադրբեջանական, այսպես կոչված, անցակետի պատճառով հումանիտար լրջագույն խնդիրների վտանգի առաջ է կանգնում Կապան համայնքի 6 գյուղի՝ Ճակատենի, Շիկահողի, Սրաշենի, Ծավի, Ներքին Հանդի, Շիշկերտի բնակչությունը: Դրանից բացի, փաստերը հաստատում են, որ պատերազմից հետո ադրբեջանական զինված ծառայողների ներկայությունն այդ ճանապարհի տարբեր հատվածներում ինքնին խաթարել է նշված բնակավայրերի քաղաքացիական բնակչության ազատ տեղաշարժը, արձանագրվել են ճանապարհի մայթերին նրանց զենքով ու դիմակավորված հայտնվելու փաստեր (այդ թվում՝ նոյեմբերի 14-ին): Պետք է հիշել, որ 2021թ. փետրվարի 26-ին այս ճանապարհը մի քանի ժամով փակվել էր ադրբեջանական զինված ծառայողների սադրանքի պատճառով:

Եվս մեկ կարևոր հանգամանք՝ այլընտրանքային ճանապարհների կառուցում չի նշանակում, թե դրանով վերացվում է Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին ներկա ադրբեջանական զինված ու դիմակավորված ծառայողներից բխող իրական սպառնալիքները ՀՀ բնակչության ու հատկապես նրանց տեղակայման դիրքերի հարևանությամբ գտնվող համայնքների բնակիչների կյանքին ու անվտանգությանը:

Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին ադրբեջանական այն ծառայություններն են, որոնք պատերազմի ընթացքում խոշտանգել, սպանել են մեր զինծառայողներին ու քաղաքացիական անձանց և դրա համար չեն պատժվել:

Պատերազմից հետո ադրբեջանական իշխանությունները խորացրել հայատյացությունն ու թշնամանքի քարոզը: Ադրբեջանական զինված ծառայողներն այդ ճանապարհներին են հայտնվել պատերազմի սպառնալիքի ու ցեղասպան քաղաքականության արդյունքում (այս փաստերը հաստատվում են ապացույցներով):

Երկու երկրների միջև տեղի չի ունեցել դեղին փոստի կամ դեմարկացիա:

Ուստի, ադրբեջանական զինված ծառայողների ներկայությունն ինքնին մեր գյուղերի մոտ ու ճանապարհներին ՀՀ բնակչության իրավունքների խախտում է:

ՀՀ հանրային իշխանության ցանկացած մարմին, այդ թվում՝ ՀՀ անվտանգության խորհուրդը պարտավոր է իր գործունեության մեջ, նաև հրապարակային հայտարարություններում ղեկավարվել մարդու իրավունքների պահանջներով և չի կարող անել այնպիսի հայտարարություններ, որոնք ոտնահարում կամ վտանգում են մարդու իրավունքները կամ դրանց պաշտպանությունը դարձնում են անհնար:

Աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/137877>

14.11.2021

Կեսգիշերին ադրբեջանական կողմը Կապան-Ճակատեն հատվածում անցակետ կտեղադրի.

ԱԱԾ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ սույն թվականի նոյեմբեր 15-ին՝ տեղական ժամանակով ժամը 00:00-ից, Կապան-Ճակատեն ավտոճանապարհի ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող հատվածում սահմանային և մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով ադրբեջանական կողմը կտեղակայի անցակետ:

Համապատասխանաբար հայկական կողմը հայելային եղանակով նշված ավտոճանապարհին նույնպես կտեղակայի սահմանային ու մաքսային հսկողության կետեր:

Միաժամանակ հայտնում ենք, որ տվյալ հատվածում այլընտրանքային ավտոճանապարհը պատրաստ կլինի մինչև սույն տարեվերջ:

Աղբյուրը՝ <https://www.lragir.am/2021/11/14/681302/>

14.11.2021

Կապան համայնքը երկրորդ անգամ իրեն առաջնորդ հռչակեց Գեւորգ Ռազմիկի Փարսյանին շնորհավորում ենք

«Շանթ դաշինք» կուսակցության Կապանի նախընտրական շտաբում հենց նոր ավարտվեց 52 ընտրական տեղամասերից ստացված նախնական տեղեկությունների ամփոփումը:

Ըստ դրա՝ արդեն իսկ կարելի է ստույգ կերպով հայտարարել՝ Գեւորգ Փարսյանի գլխավորած նախընտրական թիմը համոզիչ հաղթանակ է գրանցել Կապան խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում:

Համայնքում ընտրելու իրավունք ունեցող 31 722 քաղաքացուց քվեարկությանը մասնակցել է 20 087 հոգի կամ 63,48 տոկոսը:

Քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ճնշող մեծամասնությունը քվեարկել է հոգուտ Գեւորգ Փարսյանի գլխավորած քաղաքական թիմի:

Այս պահին Կապանում սկիզբ է առել համաժողովրդական ինքնաբուխ տոնակատարություն:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kapan-hamaynqy-erkrord-angam-iren-arajnord-hrchakets-ge%D6%82org-razmiki-parsyanin-shnorhavorum-enq>

12.11.2021

Տաթևի-Կապան ավտոճանապարհին իր նպատակին լիարժեքորեն չի կարող ծառայել, քանի դեռ չի շրջանցում Վերին Խոտանանը

Գորիս-Կապան ավտոճանապարհը փաստորեն մասամբ օկուպացվելուց ու Որոտան գյուղի մերձակայքում ադրբեջանական մաքսակետ հիմնվելուց հետո վերջին երկու օրում միանգամայն այլ նշանակություն է բովանդակություն է ձեռք բերել Մ2-Շինուհայր-Հալիձոր-Սատանի կամուրջ-Տաթևի-Աղվանի-Տանձավեր-Վերին Խոտանան-Նորաշենիկ-Կապան (Մ2) ճանապարհը:

Առանց չափազանցության կարելի է արձանագրել, որ այդ մայրուղին հիմա Հայաստանի ամենաճանրաբեռնվածներից է, ինչը կարող է հավաստել ամեն ոք, ով գեթ մեկ անգամ հասցրել է երթելեկել այլընտրանքային կոչված այդ ճանապարհով:

Սակայն, նշված ճանապարհը (ըստ ոլորտի մասնագետների դիտարկումների) իր նպատակին չի կարող ծառայել լիարժեքորեն, քանի դեռ այն չի շրջանցում Վերին Խոտանանը...

Նոյեմբերի 12-ի ժամը 15-ից մինչև 17.30-ը կրկին անանցանելի էր մայրուղու՝ Վերին Խոտանան գյուղով անցնող հատվածը:

Շրվենանցի խաչմերուկից մինչև Վերին Խոտանանի հյուսիսային հատված, առանց չափազանցության, հարյուրից ավելի մեքենաներ էին կանգնած:

Եվ միայն 17.30-ին հնարավոր եղավ, որ թեթեւ մարդատար մեքենաները (Կապանից եկող) շարժվեն առաջ, իսկ Տաթևից եկողներն իջնեն դեպի Կապան...

Ի՞նչն է բանը:

Վերին Խոտանանի Սուրբ Աստվածածին եկեղեցու մերձակայքի կտրուկ վերելք-ոլորանով երկար ու ծանրաքաշ մեքենաները մեծագույն դժվարությամբ են անցնում կամ չեն անցնում՝ ժամանակավորապես փակելով ճանապարհը՝ մինչև օգնության հասնող կլինի...

Եթե հիմա՝ աշնանային այս օրերին, երբ նոր-նոր փռված ասֆալտը քիչումիչ թացություն է պարունակում, եւ ծանրաքաշ մեքենաները դժվարությամբ են հաղթահարում նշված ոլորան-վերելքը, ապա պատկերացնել կարելի է, թե ինչ վիճակ է լինելու այնտեղ առաջին իսկ ձյունից հետո կամ (առավել եւս) մերկասառույցի ժամանակ:

Ի դեպ, ճանապարհի այդ հատվածը մեծ ռիսկեր է պարունակում նաեւ վերելից իջնող մեքենաների համար. արդեն եղել են դեպքեր, երբ վերելից իջնող մեքենաները բաց են ընկել՝ դառնալով անկառավարելի՝ դրանից բխող հետեւանքներով...

Եվ այս իրավիճակում, որքան էլ տարօրինակ է, պատկան մարմիններն իրականության հետ առերեսվելու մտադրություն չունեն: Փոխարենը՝ ենթակա լրատվամիջոցներով ժամանակ առ ժամանակ իբր հերքում են տարածվող տեղեկությունները, թե ճանապարհն այսինչ օրվա այսինչ ժամերին անանցանելի է եղել, իսկ տարածված լուրերն ապատեղեկատվություն են:

Կապան համայնքի գյուղերից մեկի վարչական ղեկավարն էլ, ով խնդիր ունի ցուցանելու իր անմնացորդ նվիրվածությունը հեղափոխության գաղափարներին, երջանկություն եւ բախտավորություն է համարում այդ ճանապարհով երթելու:

Իրականում՝ ճանապարհի այդ հատվածն օրական մի քանի անգամ կարող է փակվել եւ բացվել, քանի դեռ խնդրահարույց հանգույցը չի կարգավորվել...

Ստեղծված իրավիճակում ողջամիտ երկու էլք ենք տեսնում:

Խնդիրը հիմնովին լուծելու համար պետք է Տաթև-Կապան նորաբաց ճանապարհը շրջանցի Վերին Խոտանան գյուղը (տարօրինակ է, որ նախագծողներն ակնհայտ այդ խոչընդոտը չեն նկատել):

Հիշենք նաեւ՝ երբ Արցախյան առաջին պատերազմի տարիներին փորձում էին կառուցել նույն այդ՝ Տաթև-Կապան ճանապարհը, ապա այն նախատեսված էր Վերին Խոտանանը շրջանցող տարածքներով (եւ մեծ չափով հողային աշխատանքներ կատարվեցին այդ ժամանակ, ինչի հետքերը տեսանելի են):

Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի կառուցումը, անշուշտ, որոշակի ժամանակ կպահանջի, եթե, իհարկե, գաղափարը հավանության արժանանա:

Իսկ ի՞նչ անել հիմա, որպեսզի ճանապարհը (անկախ եղանակային հանգամանքներից) մշտապես անցանելի լինի:

Կարծում ենք՝ հիմա պետք է Վերին Խոտանանում կազմակերպել բուքսիրով քաշող-ձգող մեքենաների շուրջօրյա հերթապահություն, որպեսզի դրանք ծանրաքաշ մեքենաներին (հարկ եղած դեպքում) օգնեն հաղթահարելու ոլորանը... Այլապես ամեն օր եւ օրական մի քանի անգամ նորակառույց մայրուղին փակվելու եւ բացվելու է, պետական լրատվամիջոցներն էլ հեղինակները են ճանապարհը փակված լինելու տեղեկատվությունը, որից, սակայն, իրականությունը չի փոխվելու...

Հ.Գ.

Եվ, այդ բոլորը հանդերձ, Կապան-Գորիս ավտոմայրուղում նոյեմբերի 12-ին երկու երեւոյթի ականատես եղանք, որ դրվատանքի են արժանի:

Նախ՝ գնահատելի է ճանապարհային ոստիկանների նվիրական ու գերլարված ծառայությունը մայրուղու այդ հատվածում, առանց որի պարզապես հնարավոր չի լինի հաղթահարել ժամանակ առ ժամանակ առաջացող խառնաշփոթը:

Երկրորդ՝ Գորիսի «Ոսմար» ճանապարհաշինական կազմակերպությունը հասցրել էր ավագով մեղմել ճանապարհի այն հատվածների վտանգը, որտեղ առավտովանից մերկասառույց էր (հատկապես՝ Տանձատափի խաչմերուկից մինչև Քաշունի (Մալդաշ) գյուղի խաչմերուկ):

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/tate%D6%82-kapan-avtochanaparhn-ir-npatakin-liarzhqoren-chi-karokh-tsarayel-qani-der-chi-shrjantsum-veri-khotanany>

11.11.2021

Վաղվանից դասերը առցանց ենք անելու մինչև այլընտրանքային ճանապարհը վերանորոգեն.

Որոտանի դպրոցի տնօրեն

Վաղվանից դասերը առցանց ենք անելու մինչև այլընտրանքային ճանապարհի հատվածները, որոնք դժվարանցանելի են, վերանորոգեն: Այս մասին Tert.am-ի հետ զրույցում ասաց Սյունիքի մարզի Որոտան համայնքի դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանը:

«Գնացել ենք, ներքևը փակ էր, գնացել ենք այլընտրանքային ճանապարհով, ուշացել ենք, բնականաբար, դասերը անցկացրել ենք, հետ ենք եկել, վաղվանից էլ կրկնեմ՝ առաջանց ենք անելու, մինչև տեսնենք՝ ինչ է լինելու», - ասաց Արա Գրիգորյանը:

Դպրոցի տնօրենը մանրամասնեց, որ այլընտրանքային այդ ճանապարհը անցնում է Խոտ գյուղով:

Հիշեցնենք, որ այսօր դպրոցի ուսուցիչները ահազանգել էին, որ երկու ժամ ուշացումով են հասել դպրոց, Գորիս-Կապան ավտոճանապարհը փակ է, բաց լինելու դեպքում էլ աղբրեջանցիները պետք է անձնագրերը ստուգեն:

Աղբյուրը՝ <https://m.shamshyan.com/hy/article/2021/11/11/1200321/>

10.11.2021

Հայաստանն ու Ադրբեջանը Գորիս-Կապան ճանապարհին մաքսակետեր կտեղադրեն. Արմեն Գրիգորյան

Հայաստանը Գորիս-Կապան ճանապարհի հատվածում մաքսային և սահմանային հսկողության գործառույթներ իրականացնող կետեր կտեղադրի: Ինչպես հաղորդում

է «Արմենպրես»-ը, այս մասին Հանրային հեռուստաընկերության «Լուրեր»-ի թողարկմանն ասել է Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Այսօր ադրբեջանական կողմը հայկական կողմին տեղեկացրել է, որ այսօրվանից՝ գիշերը 12-ից սկսած՝ Գորիս-Կապան ճանապարհի հատվածում կիրականացնի սահմանային և մաքսային հսկողության գործառույթ, այսինքն՝ մաքսակետեր կտեղադրի: Հայկական կողմը ևս համապատասխան քայլեր կձեռնարկի: Այսինքն, ճանապարհի այդ հատվածում ևս կտեղադրի մաքսային և սահմանային հսկողության գործառույթներ իրականացնող կետեր, և այդ աշխատանքները մենք նախապես արդեն սկսել ենք, որպեսզի այդ ուղղությամբ աշխատենք: Բայց քանի որ, ինչպես հայտարարվել է արդեն, պատրաստ է Կապան-Տաթև ճանապարհը, այնտեղից էլ կամ Գորիս, կամ Երևան, կարելի է ասել, անվտանգ շահագործվող ճանապարհ ունենք, այլընտրանքային ճանապարհն այլևս պատրաստ է՝ ինչպես ապրանքներ տեղափոխելու, այնպես էլ այլ տեսակի ցանկացած ավտոմեքենայի համար ճանապարհն օգտագործելի է: Շատ կարևոր է, որ նոր կառուցված ճանապարհ է», - ասաց Գրիգորյանը:

Նա նշել է, որ վերջին շրջանում կառավարության աշխատանքների արդյունքում Երևան-Կապան ճանապարհը վերջին 15 տարվա ընթացքում լավագույն բարեկարգ ճանապարհն է:

«Կարևոր եմ համարում նշել, որ Գորիս-Կապան ճանապարհին գտնվող համայնքները, այսինքն՝ Շուռնուխ, Որոտան, Ճակատեն համայնքների համար այս պահին ևս ճանապարհային աշխատանքներ են կատարվում, որպեսզի դեպի այս համայնքներ տանող ճանապարհները բարեկարգվեն», - հայտարարել է Գրիգորյանը՝ նշելով, որ այդ ճանապարհները մոտ ժամանակներս ասֆալտապատվելու են:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1067871.html>

10.11.2021

Գորիսում կայացել է նորընտիր ավագանու առաջին նիստը

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisum-kayatsel-e-noryntir-avaganu-arajin-nisty>

02.11.2021

Տեղ համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստը

Սույն թվականի նոյեմբերի 1-ին Տեղ համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայացավ Տեղ համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը, որին մասնակցում էր ավագանու բոլոր 15 անդամները:

Օրակարգում.

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձնման երդման արարողություն

2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի նորընտիր ավագանու խմբակցությունների ստեղծման մասին,

3. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Նիստը վարում էր համայնքի ավագանու տարիքով ավագ անդամ Նազիկ Բաղդասարյանը, որն էլ հայտարարեց, որ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2.-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը՝ Դավիթ Արամայիսի Ղուլունցը: Այնուհետև կայացավ Դավիթ Ղուլունցի կողմից համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձնման երդման արարողություն, որից հետո նիստը վարեց համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ ավագանին ընդունեց համապատասխան որոշումներ:

Ավագանու նիստի ընթացքին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://youtube.com/playlist...>

Աղբյուրը՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=5321740467855251&id=1812692675426732

01.11.2021

Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում շահագործման է հանձնվել 45 000 քմ պայթուցիկ զինամթերքից մաքրված տարածք

Սույն թվականի հոկտեմբերի 30-ին «Հումանիտար ակնազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում պաշտոնապես տեղական ինքնակառավարման մարմիններին շահագործման հանձնեց 45 000 քմ պայթուցիկ զինամթերքից մաքրված տարածք:

Աղբյուրը՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2669439956684235&id=1513184855643090

Կազմող՝ Ս. Ալավերդյան